ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

16543

Հաստատուած է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտէի Նախագահութեան կողմից 1924 թ. 11 Յունուարի։

ՍՏԱՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

1871
38

361
2-24

ԹԷՀՐԱՆ
տպարան «Բոսֆոր»
1924

Գ. Ս. Գրիգորյանի անվ.
ՀՍԽՀ-ՍՍՀ
Ա. Միասնիկյան
Ս. Սպասիկյանի անվան
1108

361
Z-24

77

Արտատպված

ԵՐԵՒԱՆԻ Հ. Օ. Կ. Կ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆԻՑ

113481-ԱՀ

4871-38

Գաւառ № 1472

2011

Հաստատուած է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտէի Նախագահութեան կողմից 1924 թ. 11 Յունուարի։

ՍՏԱՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ

Ա. ՀՕԿ—ի նպատակը եւ գործունէութեան սահմանները

1. Հայաստանի Օգնութեան Կոմիտէի նպատակն է—

ա) Աջակցել երկրի տնտեսական և կուլտուրական շինարարութեան։

բ) Օգնել Հայաստանի աղքատակչութեանը սովի և այլ աղետների ժամանակ։

2. Կոմիտէն իր նպատակներին հասնելու համար գործում է ինչպէս իր, նոյնպէս և պետական ու հասարակական ապպարատների միջոցով։

3. Կոմիտէն սովի և այլ աղետների դէմ մաքառելու համար—

ա) Աջակցում է նոյն նպատակով գործող հիմնարկութիւններին։

բ) Մատակարարում է կարօտեալներին մթերք.

գ) Հիմնում է ճաշարաններ և թէյարաններ.

դ) Բաշխում է հագուստեղէն։

4098

ե) Կազմակերպում է բժշկական օգնություն, հիմնելով ժամանակավոր հիւանդանոցներ, բուժարաններ, թռուցիկ բժշկական խմբեր և այլն։

4. Հայաստանի տնտեսական շինարարութեան գործին նպաստելու համար Կոմիտէն—

ա) Մատակարարում է գիւղացիներին սերմացու, գիւղատնտեսական գործիքներ, լծկաններ, կթաններ։

բ) Բաշխում է անհրաժեշտ դեղօրայք անասունների, այգիների և բանջարանոցների վարակիչ հիւանդութիւնների դէմ։

գ) Աջակցում է աւերուած գիւղերի վերաշինութեան։

դ) Տարածում է գործնական և տեխնիկական գիտելիքներ։

ե) Աջակցում և հիմնում է գիւղատնտեսական և առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւններ։

5. Կուլտուրական շինարարութեանը զարկ տալու համար՝

ա) Օգնութեան է հասնում ժողովրդական դպրոցներին, աջակցելով եղածների պաշտպանման և նորերի բացմանը։

բ) Կառուցում և վերանորոգում է դպրոցական շէնքեր։

գ) Մատակարարում է գիտական պեսայքներ և գործիքներ, դպրոցական պարագաներ։

դ) Օժանդակում է Հայաստանի կուլտուր կրթական հիմնարկութիւններին։

ե) Նպաստում է երկրի կուլտուրական աշխատաւորների, արուեստագետների, գիտնականների և այլն վիճակի բարելաւման։

6. Վերոյիշեալ նպատակներին մասնակցելու համար Կոմիտէն հիմնում է հետեւեալ ֆոնդերը։

ա) Հանրօգուտ կառուցումների ֆոնդ, ջրանցքների կառուցում, ճահիճների չորացում և այլն։

բ) Գիւղատնտեսական ֆոնդ։

գ) Կուլտուր—կրթական ֆոնդ։

դ) Բժշկա-սանիտարական ֆոնդ, որոնց համար Կոմիտէն անում է—

ա) Բանաւոր և գրաւոր պրոպագանդա։

բ) Ցատուկ նիւթեր և պատգամաւորներ է ուղարկում տրտասահման։

գ) Մշտական-և սերտ յարաբերութիւն է պահպանում արտասահմանեան այն կազմակերպութիւնների հետ, որոնք կարող են օգտակար լինել օգնութեան և շինարարական գործին։

Բ. Օգնութեան եղանակը

7. ՀՕԿ-ը ամբողջութեամբ ընդունում է աշխատանքային օգնութիւնը, հանրօգուտ աշխատանքների կազմակերպութեան միջոցով։

8. Անվերադարձ օգնութիւն տալում է որպէս բացառութիւն գլխաւոր Վարչութեան որոշմամբ։

Գ. ՀՕԿ—ի միջոցները

9. ՀՕԿ—ի միջոցները կազմում են.

ա) Ընդհանուր ժողովարարութիւններ։

բ) Նուիրատուութիւններ դրամով, պարէնով, շորեղէնով, դեղօրայքով և կուլտուրական շինարարու-

թեան զանազան պարագաներով։

գ) Զանազան ընկերութիւնների, միութիւնների և հասարակական կազմակերպութիւնների կամաւոր տուրքեր։

դ) Եկամուտներ Կոմիտէի ձեռնարկութիւններից, ներկայացումներից, դասախօսութիւններից և այլն։

Դ. ՀՕԿ—ի Կազմակերպութիւնը

10. Կոմիտէն կազմուած է. 1. Համագումարից. 2. Գլխաւոր Վարչութիւնից, որ գտնւում է Երևանում և 3. Վերաստուգիչ յանձնաժողովից։

11. Գլխաւոր Վարչութիւնը բաղկացած է 15 անդամից և 5 փոխանդամից, որոնց ընտրում է համագումարը՝ մինչև միւս հերթական համագումարը։

12. Վարչութեան նախագահին ընտրում է համագումարը, իսկ երկու փոխ-նախագահներին, քարտուղարին և գանձապահին—Վարչութիւնը։

13. Վերաստուգիչ յանձնաժողովը բաղկացած է երէք անդամից և երկու փոխ—անդամից, որոնց ընտրում է համագումարը՝ մինչև միւս հերթական համագումարը։

14. Վերաստուգիչ յանձնաժողովը խորհրդակցական ձայնով իրաւունք ունի մասնակցելու թէ Գլխաւոր Վարչութեան և թէ ճիւղերի վարչութեան նիստերին։

Ե. Համագումարը

15 Հերթական համագումար հրաւիրւում է տարին մէկ անգամ Երևանում։

Համագումարին իրաւունք ունին մասնակցելու 1. հիմնադիր անդամները, 2. ճիւղերի ներկայացուցիչները, 3. Գլխաւոր Վարչութիւնը, 4. Վերաստուգիչ Յանձնաժողովը։

Գլխաւոր Վարչութեան որոշմամբ համագումարին իրաւունք ունին մասնակցելու նաև այն հիմնարկութիւնները, որոնք նպատակ ունին նպաստել Հայաստանի օգնութեան գործին։

16. Հարկ եղած դէպքում հրաւիրւում է արտակարգ համագումար.

ա) Գլխաւոր Վարչութեան որոշմամբ և

բ) Ճիւղերի $^1/_3$-ի ցանկութեամբ։

17. Համագումարում խնդիրները վճռւում են ներկայ եղող անդամների ձայների մեծամասնութեամբ։ ՀՕԿ-ի լիկվիդացիան, նաև կանոնադրութեան փոփոխումը համագումարում որոշւում է ձայների $^2/_3$-ով։

Զ. ՀՕԿ-ի ճիւղերը

18. ՀՕԿ-ն ունի իր ճիւղերը։

19. Կոմիտէի ճիւղերը բացւում են կամ Գլխաւոր Վարչութեան անդամների անմիջական ղեկավարութեամբ և կամ նրա կողմից լիազօրուած անձանց նախաձեռնութեամբ։

20. Կոմիտէի ճիւղերը կազմակերպւում են ներկա ստատուտի մէջ յիշուած հիմունքներով տեղական ազգային, հասարակական մարմինների և գործիչների նախաձեռնութեամբ, հատաձայն տեղական պայմանների. ճիւղերն ունին անդամներ անդամավճարով. վճարի չափը որոշում են ճիւղերը։

Ը. ՀՕԿ-ի Իրաւական դրութիւնը

21. ՀՕԿ-ն իր նպատակներով և կազմակերպման սխեմով, անկախ իր անդամների քաղաքական դաւանանքից, հասարակական մի մարմին է և յայտարարում է իրան քաղաքական և կուսակցական պայքարի հանդէպ չեզոք։

22. ՀՈԿ ը ենթակայ է Ս. Խ. Հայաստանի Կենտգործկոմի հսկողութեան և իր ամբողջ գործունէութեան մէջ ենթարկւում է Հանրապետութեան օրէնքներին:

23. Կոմիտէն իր տրամադրութեան ենթակայ դրամները և ընդհանրապէս գոյքը գործադրում է սոյն սահմանով նախատեսուած նպատակների սահմաններում ըստ իր հայեցողութեան, իսկ իր նպատակներին համապատասխան յատուկ նէրքները գործադրում է համաձայն նիւրատի կամքին:

24. Կոմիտէի հասցէով ուղղուած դրամները, իրերը և ընդհանրապէս ամբողջ գոյքը ազատ են պետականացումից, գրաւումից և այլ սահմանափակիչ օրէնքներից և միաժամանակ արտաքին փոխադրութիւնների ընթացքում օգտւում են պետական գոյքերի վերաբերեալ արտօնութիւններով:

25. ՀՈԿ-ը իրաւական անձ է և ունի իր տիպական կնիքը:

Թ. ՀՈԿ-ի Լիկվիդացիան

26. ՀՈԿ-ի լիկվիդացիան, ինչպէս և նրա գոյքի յանձնումը Խորհրդային Հայաստանի պետական հասարակական որևէ հիմնարկութեան՝ որոշում է համագումարը ձայների $^2/_3$-ով, լիկվիդացիայի դէպքում գլխաւոր վարչութիւնը երեք ամիս առաջ այդ մասին յայտնում է ճիւղերին և հաւաքում նրանց կարծիքը:

2013
16513
ՀԱՅ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ Ա. Ա.